

ԴԻՖՈՒԶԻԱՅԻ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիֆուզիայի երևույթն ունի բազմաբնույթ կիրառություններ:

- Ներկայումս արդյունաբերության մեջ կիրառվում է վակուումում դիֆուզային եռակցման մեթոդը, որը հնարավորություն է տալիս եռակցելու այնպիսի նյութեր, որոնք այլ եղանակներով հնարավոր չէ եռակցել, օրինակ, պողպատը՝ ալյումինի կամ տիտանի հետ, մետաղը՝ խեցեղենի հետ:
- Մետաղագործության մեջ դիֆուզիայի երևույթի միջոցով կատարվում է մետաղների և համաձուլվածքների մակերևույթների հարստացում ազոտով (այսպես կոչված ազոտացում), որը դետալների մակերևույթին հաղորդում է արտակարգ բարձր ամրություն և պահպանվում է ընդհուպ մինչև $600\div 650^{\circ}\text{C}$ ջերմաստիճան, ինչպես նաև հակակոռոզիակայնություն և մաշակայունություն:
- Դիֆուզիան կարևոր դեր է կատարում բույսերի ու կենդանիների հյուսվածքներում, բջիջների կենսագործունեության պրոցեսներում (օրինակ՝ թթվածնի դիֆուզիան թոքերից արյան մեջ և արյունից դեպի հյուսվածքները, մարսողական նյութերի ներծծումն աղիքներից և այլն):